բանական բնութեան մերոյ ըստ կամաց և ըստ հաճոյից ամենայն արանց Հայոց՝ եթէ Եկեղեցիական հովուապետաց և հասարակ ժողովրդոց հրաժարիլ 'ի ամենայն անօրէնութենէ պտղոյն ծառի չարէ. որում հրամայեսցի յօրէնս մեր չուտել, և զոր ինչ կանոն Օրինաց որում ընդունելի լինիցի և հաստատեսցի մէջ Հայոց՝ նոյն կանոն լիցի թագաւոր հայոց 'ի վերայ յաշխարհին Հայաստանեաց. սովաւ ամենեքեան հասարակապէս լիցին թագաւոր և Տէր 'ի վերայ աշխարհին և 'ի վերայ ժողովրդոց իւրոց, վասն զի կանոնս այս իւրաքանչիւր ոք արարին և հաստատեցին ընդունեցին հատուցանելով ամենեցուն վարձս գործոց ձեռաց իւրեանց ըստ օրինօք զի ամենեքեան ստայցեն իւրաքանչիւր հարկս սաքսս պատիւս հնազանդութեան և պատիժս ըստ Օրինօք և պաշտօնատարք Օրինաց մերոց եղիցին սպասաւոր աշխարհին և հասարակ ժողովրդոց Հայոց ըստ բանին Տեառն որ ասաց, և որ 'ի ձէնջ եղիցի մեծ նա՛ եղիցի սպասաւոր. Օրհնեալ է ամենայն բան բերանոյ Տեառն և փառաւորեսցուք բան Տեառն և առ բնութիւնս մեր և մեծարեսցուք պաշտօնեայս մեր նոցայ, որում հաւատարմաբար սպասաւորեսցեն մեզ ըստ Օրինօք մերովք և ակն կալցուք 'ի Տեառնէ արարչէ մերմէ, որ ինքն վարձահատոյց լիցի նմայ յաւիտենական կենօք 'ի հանդերձելումն և այլն։